ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 ապրիլի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

55
(3086)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆԸ ԿՐԿԻՆ ԱՆՊԱՏԻԺ ՄՆԱՑ

Երեկ ԱԺ ՔՊ խմբակցությունը մոտ 20 րոպեանոց նիստ անցկացրեց խորհրդարանում՝ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքի առնչությամբ էթիկայի հանձնաժողով ստեղծելու նախագծի վերաբերյալ: Չնայած այն բանին, որ ՔՊ խմբակցության պատգամավորները տարբեր անկյուններում քննադատում են Անդրանիկ Քոչարյանի պահվածքը, բայց խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը նիստից հետո խրոխտ հայտարարեց, թե խմբակցությունը դեմ է քվեարկելու նախագծին. «ՔՊ խմբակցությունը տեւական ժամանակ է աշխատում է ԱԺ-ում մշտական գործող էթիկայի հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ, որտեղ կքննվեն պատգամավորական էթիկայի առնչությամբ ամենատարբեր հարցերը: Հույս ունենք, որ այդտեղ ընդդիմությունը եւս մեզ հետ կհամագործակցի, որովհետեւ նաեւ ընդդիմության ձայներն են մեզ պետք լինելու, եւ կստեղծվի մշտական գործող էթիկայի հանձնաժողով»,- հայտարարեց Կոնջորյանն ու արագ հեռացավ:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ փակ հանդիպումից առաջ Անդրանիկ Քոչարյանը ՔՊ-ականների հետ մասնավոր զրույցներ է ունեցել, բացատրել, թե ինքը լրագրողին վիրավորելու միտում չի ունեցել, ավելին՝ մեջբերել է Սաղմոսներից խոսքեր: Իսկ արդեն խմբակցության նիստի ժամանակ, երբ սկսել են հարցը քննարկել, Քոչարյանն ասել է, որ սխալ կլինի ընդդիմադիրների հետ իր վարքը քննարկել, նրանց առիթ տալ քննադատելու, ճիշտ կլինի ԱԺ-ում ունենալ էթիկայի հանձնաժողով, հետագայում նաեւ իր հարցը քննարկել, բայց ոչ ընդդիմության նախաձեռնությամբ: ՔՊ-ականներն էլ, որպեսզի ընդդիմադիրներին ցույց չտան, թե իրենք ճիշտ են, ստիպված որոշել են էթիկայի հանձնաժողով ստեղծել, հետո նոր Անդրանիկ Քոչարյանի հարցը քննարկել:

Հիշեցնենք, որ Անդրանիկ Քոչարյանը մարտի 20-ին վիրավորել էր լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանին. նախ կոշտ տոնով պահանջել էր իր կողքից հեռանալ, ապա հորդորել էր մաքրել շրթունքները: Ավելի ուշ նա հրաժարվել էր իր վարքի համար ներողություն խնդրելուց: Փոխարենը լրագրողները ստորագրահավաք էին սկսել ԱԺ-ում՝ այս հարցով էթիկայի հանձնաժողով ստեղծելու նախաձեռնությամբ:

Ընդդիմադիր 2 խմբակցությունները, ընդառաջելով դիմումին, շրջանառության մեջ դրեցին նախագիծը, որից հետո ՔՊ-ն որոշեց մերժել այն:

Ստացվում է, որ Քոչարյանը կրկին մնում է անպատիժ, ինչպես եղավ իր՝ խմբակցության ներկայացուցիչներին վիրավորելու, նրանց վարկաբեկելու դեպքում, իսկ նրա «խաղաթուղթը» 44-օրյայի զեկույցն է, որը Քոչարյանը որպես «զենք» է պահել իշխանությունների դեմ եւ խոստացել է հրապարակել այս տարվա սեպտեմբերի 27-ին: Թեեւ այդ զեկույցի ներկայացումն արդեն ապօրինություն է, քանի որ հանձնաժողովը վաղուց գոյություն չունի:

«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի 29.04.2025-ին



Այսօր՝ ապրիլի 23-ին, մեկնարկելու է դաշնակցականների կողմից կազմակերպված ավանդական ջահերով երթը, որին մասնակցում են ինչպես քաղաքական, հասարակական գործիչներ, հայտնի դեմքեր, այնպես էլ հասարակ քաղաքացիներ, այդ թվում՝ ուսանողներ ու դպրոցականներ: «Ժողովուրդ» օրաթերթին երեկ տարբեր ուսանողներ պատմեցին, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարությունից շրջաբերականներ՝ հրահանգավորող գրություններ են գնացել տարբեր բուհեր եւ դպրոցներ, որպեսզի ուսանողները եւ աշակերտները չմասնակցեն այսօրվա ավանդական դարձած ջահերով երթին: Հիշեցնենք, որ երթից առաջ, որպես բողոքի նշան, ակտիվիստները ավանդաբար այրում են Թուրքիայի եւ Ադրբեջանի դրոշները, ապա բոլորը շարժվում են Ծիծեռնակաբերդ՝ 1915 թվականին Եղեռնին զոհ գնացած հայրենակիցների հիշատակին հարգանքի տուրք մատուցելու: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության մամուլի խոսնակ Նելլի Վահանյանին՝ պարզելու՝ եղե՞լ է նման շրջաբերական, եւ եթե այո՝ ինչու: ԿԳՄՍՆ մամուլի խոսնակ Նելլի Վահանյանը «Ժողովուրդ» օրաթերթին ասաց, թե նման բան չկա, բայց խոստացավ, որ կանի որոշ ճշտումներ, եւ խոսք տվեց մինչեւ կեսօր պատասխանել մեզ: Սակայն մինչեւ ուշ երեկո այդպես էլ պատասխան չստացանք:



Երեկ խորհրդարանում կատարվածը, որքան էլ որ տհաճ միջադեպ որակվեց, այնուամենայնիվ, խոր արմատներ ուներ, եւ ՔՊ-ի կողմից գծագրված առավել մեծ պլան տապալվեց: Խնդիրը միայն Ցեղասպանության ուրացման պատժի մասին նախագիծը չէր: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ին մոտ կանգնած խորհրդարանական աղբյուրներից պարզեց, որ երեկ ՔՊ-ականները մտադիր էին «Դաշնակցության» ղեկավար Իշխան Սաղաթելյանի վրա հարձակվել, ցուցադրաբար ծեծկռտուք սարքել հենց նրա հետ: Անգամ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը լրագրողների հետ զրույցում չզսպեց իր էմոցիաները՝ թիրախավորված քննադատելով եւ վիրավորելով Իշխան Սաղաթելյանին: Վահագն Ալեքսանյանն էլ հայտարարեց, թե տելեգրամյան ալիքները գրում են՝ խժդժություններ են հրահրվելու առաջիկա օրերին, խմբեր են ձեւավորվում եւ այլն: Կարճ ասած՝ ՔՊ-ականները ցանկանում էին, ԱԺ-ում իրենց համարձակությունը ի ցույց դնելով, կանխել հնարավոր այն բախումները փողոցում, որոնց հնարավորության մասին խոսում էր ՔՊ փոխնախագահ Վահագն Ալեքսանյանը: Սակայն Իշխան Սաղաթելյանը չտրվեց սադրանքի, չխառնվեց քաշքշուկին, եւ ՔՊ-ի պլանները ձախողվեցին: Դրա համար շատերը քաշքշուկի ժամանակ բղավում էին՝ «իշի, ամբիոնի մոտ խոսի», որպեսզի առավել հարմար լիներ ծրագրի իրագործումը: Նկատենք նաեւ, որ երեկ հատուկ լկտիությամբ աչքի ընկան ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, որը փողոցային բառապաշարով էր բղավում, ինչպես նաեւ Ալավերդիում պարտված՝ համայնքի ղեկավարի թեկնածու, պատգամավոր Արեն Մկրտչյանը, որը էլի բղավում էր՝ խուլիգանական վարքագիծ դրսեւորելով: Դե իսկ սադրանքը կազմակերպեց Նիկոլ Փաշինյանի քավորը՝ Վահե Ղալումյանը՝ պատգամավոր Գեղամ Մանուկյանի վերնաշապիկի օձիքից քաշքշելով: Նա ակնհայտորեն ձգվում էր դեպի Իշխան Սաղաթելյանը, սակայն «Հայաստան» խմբակցության պատգամավորները թույլ չտվեցին ՔՊ-ականներին հասնել Սաղաթելյանին:

«Ժողովուրդ» օրաթերթի՝ Կառավարությանը մոտ կանգնած աղբյուրները փոխանցում են, որ հայրենի իշխանությունները նպատակ ունեն ՀՀ-ում գոյություն ունեցող բոլոր տեսչական մարմինները միավորել: Ըստ մեր աղբյուրների՝ իշխանությունները Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ «դաբրո» են տվել այդ նախագծին: Այսինքն՝ առաջիկայում բունտ է հասունանալու, քանի որ տեսչական մարմինների միավորմամբ շատ աշխատակիցներ են կրճատվելու, ու ընդամենը մի փոքր տեսչական կոմիտե է ստեղծվելու: Կառավարության մեր աղբյուրները փոխանցում են, որ այս ամենի հետեւում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Պետրոս Մարտիրոսյանն է կանգնած, որի կարծիքով՝ տեսչություններ ունենալը անիմաստ է, ու պետք է փակել տեսչական մարմինները:Այսինքն՝ տարիներ շարունակ իշխանությունները հայտարարել են, թե անկախ կառույցներ ունեն, որոնք վերահսկում են տարբեր գերատեսչություններ, հիմա ստացվում է՝ դա անիմաստ գործ է եղել, չհաշված, որ այդքան քաղաքացի մնալու է առանց աշխատանքի:

ՈՒՂԵՎԱՐՁԻ ԲՈՅԿՈՏԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«ՄԵՆՔ ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆ ԱՐԵԼ ԵՆՔ». Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Երեկ ընթանում էր Երեւանի ավագանու հերթական նիստը: Երեւանի քաղաքապետարանում քննարկվում էր հասարակական տրանսպորտի 150 դրամ ուղեվարձը: Այս թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ»-ը զրուցել է «Մայր Հայաստան» դաշինքի անդամ Մանուկ Սուքիասյանի հետ:

-Պարոն Սուքիասյան, տրանսպորտի ուղեվարձի թանկացման թեման կրկին օրակարգում է: Ի՞նչ ակնկալիքներ ունեան քաղաքացիները «Մայր Հայաստան» խմբակցությունից:

-Նախ, պետք է արձանագրենք, որ այս նախագիծը մենք մուտք ենք արել, քանի դեռ չէր քննարկվել 17 հազար երեւանցու ստորագրահավաքի արդյունքում ձեւավորված նախագիծը՝ կասեցնել թանկացումը: Բոլորը տեսան, որ 17 հազար երեւանցու ստորագրման նախագծի քննարկումից իրենք ճողոպրեցին: Հերթական անգամ նրանց քաջությունը չբավականացրեց խնդիրը քննարկել, եւ երեւանցիների համար հակափաստարկներով հանդես գալ, փորձել հիմնավորել:

Նիստը տապալեցին, եւ, ըստ օրենքի պահանջի, արդեն սույն նախագիծը եկավ դրանից հետո: Կրկին օրենքի պահանջը հիմք ընդունելով՝ նախագիծը ներառվել է նիստի օրակարգում որպես զեկուցվող հարց: Բոյկոտը կայացած փաստ է, եւ բոյկոտի դեմ պայքարելու համար է, որ իրենք միանգամից 3 օրենքի մեջ փոփոխություններ մտցնելու փաթեթ են տարել Ազգային ժողով, որպեսզի սահմանեն տուգանքներ՝ 10,000 դրամ առանց տոմս երթեւեկելու, 15,000 դրամ ուրիշի տոմսով երթեւեկելու համար:

Մենք պատրաստվում ենք հարցը տանել տեղական հանրաքվեի: Եվ իրենք նաեւ այս ուղղությամբ օրենսդրական փոփոխություններ են պատրաստվում անել՝ տրանսպորտի ուղեվարձը դարձնել անվճար, որը ենթակա չէ հանրաքվեով կարգավորվելու:

Այսինքն՝ իրենց ուժը, իրենց կարողությունը չի բավականացնում քաղաքային մակարդակով դիմակայելու «Մայր Հայաստանի» կողմից ներկայացված նախաձեռնություններին, իրենք օգնության են կանչել պառլամենտական գործընկերներին, որպեսզի նրանք էլ իրենց հերթին օրենսդրական արգելափակում դնեն: Այդ կերպ հնարավորություն կունենան ավտոբուսներում մարդկանց՝ վարորդների կողմից բարոյական ճնշման ենթարկելուց բացի, նաեւ օրենսդրական գործիքակազմով ճնշելու:

Այս առումով մեր պայքարը շարունակվում է: Անցած մեկ տարին ցույց տվեց, որ կամքի եւ գրագիտության պարագայում քաղաքական ուժը կարող է հետեւողականորեն գնալ իշխանությունների տարաբնույթ փնթիությունը, վատնումները բացահայտելու, կռիվ տալու ուղղությամբ:

-Պարոն Սուքիասյան, Դուք խոսեցիք բոյկոտից, մենք տեւական ժամանակ է ահազանգեր ենք ստանում քաղաքացիներից, որ նրանք վախենում են բոյկոտելուց, քանի որ մտածում են, որ կարող են իրենց վնաս հասցնել: Քաղաքացիները պնդում են, որ բոյկոտի կեսից Դուք մենակ թողեցիք իրենց: Ինչո՞ւ միայնակ թողեցիք երեւանցիներին:

-Բոյկոտը ինքին քաղաքացու սոցիալական վարքագիծն է. այսինքն, եթե քաղաքացին չի ուզում, մեր ներկայությունով իր կարծիքը չի փոխելու: Ինչ վերաբերում է Ձեր նշած դեպքերին, ապա ասեմ, որ մենք գրեթե ամեն օր ստանում ենք ահազանգեր, որ կոնկրետ համարանիշի վարորդը խոչընդոտներ է հարուցել, հրաժարվել է մեքենան վարելուց: Ինչ վերաբերում է միայնակ թողնելուն՝ ես կատեգորիկ համաձայն չեմ դրա հետ: Մենք, հունվար ամսից սկսած՝ շուրջ 2 ամիս՝ առավոտյան սառնամանիքից սկսած, մեր ամբողջ խմբակցությունով եղել ենք քաղաքացիների կողքին: Եվ եթե կա այդ բոյկոտի պահանջարկը, այդ երկու ամիսը բավարար էր, որ պրոցեսն ինքնուրույն աշխատի՝ ինչը հիմա տեղի է ունենում: Եթե քաղաքացիները հակված չէին, մենք ուզում է տարին 12 ամիս բոյկոտ քարոզեինք՝ միեւնույնն է, ոչինչ չէր փոխվելու: Մենք մեր անելիքը արել ենք:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

ԵՐԵՎԱՆ-ԱՃՏԱՐԱԿ ՄԱՅՐՈՒՂԻՆ ԿՐԿԻՆ ՓԱԿ ԷՐ

Քասախ գյուղի բնակիչները երեկ կրկին փակել էին Երեւան-Աճտարակ մայրուղին: Նշենք, որ ակցիայի մասնակիցները պարբերաբար փակում են մայրուղին: Նրանք պահանջում են վերադարձնել թիվ 59 երթուղին, որը Քասախը կապում էր Երեւանին: Հիշեցնենք, որ ապրիլի 9-ին Կառավարությունում ընդունել են Պռոշյան եւ Քասախ բնակավայրերի բնակիչներին՝ այդ գյուղերի տրանսպորտի հարցի քննարկման նպատակով: Հանդիպմանը մասնակցել են վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչներ, ՏԿԵ նախարարության տրանսպորտի վարչության պետը, քաղաքապետարանի ներկայացուցիչը:

Հանդիպումից հետո պռոշյանցիները հայտարարեցին, որ իրենց խնդիրը լուծվել է, թիվ 25 երթուղին կպահպանվի, սակայն այն ոչ թե կհասնի գյուղ, այլ ՊՆ նախկին շենքի հատվածից շրջադարձ կկատարի եւ կվերադառնա Երեւան: Իսկ ահա Քասախ համայքնի համար թիվ 59 երթուղին հանվում է:

Պռոշյան եւ Քասախ համայնքների բնակիչները մինչ այս օգտվում էին թիվ 25 եւ 59 երթուղին սպասարկող ավտոբուսներից՝ Երեւան հասնելու համար վճարելով 150 դրամ: Հիմա Երեւանի քաղաքապետարանը որոշել է, որ ավտոբուսները չեն հասնելու այդ համայնքներ: Նոր երթուղին սպասարկելու է «Մուլտիտրանսպորտ» ընկերությունը, ուղեվարձը լինելու է 250 եւ 200 դրամ: Բացի այս, ինչպես ավելի վաղ ներկայացրել էին բնակիչները, նոր երթուղին սպասարկելու է ընդամենը 7 կմ՝ իրենց համայնքներից հասնելով մինչեւ Աջափնյակ վարչական շրջանում գտնվող հայտնի Ֆիզիկայի ինստիտուտ, վերջին ավտոբուսը նախատեսված է ժամը 19:30-ին: Նախկին երթուղու վերջին կանգառը եղել է Հաղթանակի զբոսայգու մոտ:

Մենք պահանջում ենք Պռոշյան եւ Քասախ համայնքների տրանսպորտային 25 եւ 59 երթուղիները թողնել նույնը մինչեւ հարցի իրական եւ վերջնական լուծումը: Այս մասին երեկ՝ ապրիլի 22-ին, բողոքի ակցիայի ժամանակ հայտարարեց Քասախի բնակիչներից Դավիթ Բոյաջյանը:

Ակցիայի ժամանակ իրավիճակը լարվեց, քանի որ ակցիայի ոստիկանները փորձում էին բացել ճանապարհը՝ մեկնաբանելով, որ ավտոբուսում 80 տարեկան կին կա, պետք է հասնի տուն:

«Ձեր խաթրով ենք գնում, այդպես մի՛ արեք, գնացե՛ք այն կողմ: Հայրենասիրությունից եք խոսում, մարդասիրությունից եք խոսում, մեքենայի մեջ 80 տարեկան մարդիկ են նստած, ճանապարհը բացե՛ք, թող մարդը գնա», - ասաց ոստիկանության ներկայացուցիչը:

Ավելի ուշ ակցիան ավարտվեց ու Երեւան-Աշտարակ ճանապարհը բացվեց: Կառավարությունն առաջարկել է ապրիլի 25-ին հանդիպել երկու համայնքների բնակիչների ներկայացուցիչների հետ եւ դարձյալ քննարկել հարցը: Չնայած հավաքվածները դժգոհեցին, որ այս պահին չի լուծվում հարցը, եւ որ հույս էլ չունեն, որ հանդիպման արդյունքում կլուծվի, բայց համաձայնեցին բացել ճանապարհը:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

Ազգային ժողովը 2-րդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի» փոփոխությունները, եւ ֆիզիկական անձանց կողմից 2024 թվականի համար հայտարարագիր ներկայացնելու ժամկետը մայիսի 1-ից երկարաձգվեց մինչեւ նոյեմբերի 1-ը:

Օրինագիծն ընդունվեց 60 կողմ, 1 դեմ, 29 ձեռնպահ ձայներով: 2024 թվականի հայտարարագրի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի մարտի 2-ը: Մինչեւ նոյեմբերի 1-ը հայտարարագիր չներկայացնելու համար նախատեսված է նախազգուշացում: Այդ ընթացքում ՊԵԿ-ը քաղաքացուն պարբերաբար կհարցնի, թե ինչով կարող է օգնել: Եթե քաղաքացին 30 օրվա ընթացքում հայտարարագիր չներկայացնի, ապա տուգանքը կլինի խորհրդանշական՝ 5000 դրամ: Եթե այս ժամկետն էլ չարաշահվի եւս 30 օրով, ապա տուգանքը կկրկնապատկվի՝ կազմելով 10 հազար դրամ:

Հիշեցնենք, որ վարձու աշխատող, ինչպես նաեւ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում հարկվող եկամուտ ստացած քաղաքացիները պետք է հայտարարագիր ներկայացնեին մինչեւ մայիսի 1-ը: Ավելի ուշ հայտարարագիր լրացնելու ժամկետները երկարաձգվեցին մինչեւ նոյեմբեր:

Եթե հայտարարագիր ներկայացնող անձը կատարել է սոցիալական ծախս, ապա ունի փոխհատուցման իրավունք, որի առավելագույն չափը տարեկան 100 հազար դրամն է:

ԵՎՍ 19 ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՌԵԱԿՏՈՐ

Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին հայտարարել է Բուշերի ատոմակայանում (ԱԷԿ) գործող ռեակտորին եւս 19 միջուկային ռեակտոր ավելացնելու Իրանի մտադրության մասին: «Իրանը ներկայումս մեկ ռեակտոր է շահագործում Բուշերի ատոմակայանում:

Մեր վաղեմի ծրագիրն է կառուցել եւս 19 ռեակտոր, ինչը իր հերթին նշանակում է, տասնյակ միլիարդավոր դոլարների պայմանագրերի կնքում», - նշել է նա X սոցիալական մեդիա հարթակում հրապարակված ուղերձում:

Արաղչին նաեւ նշել է, որ Թեհրանը երբեք դեմ չի եղել Վաշինգտոնի հետ գիտատեխնիկական համագործակցությանը: Ավելին՝ Արաղչիի խոսքերով, «տրիլիոն դոլարների հնարավորությունները, որ տալիս է Իրանի տնտեսությունը, կարող է բաց լինել Ամերիկայի Միացյալ Նահանգների ձեռնարկությունների համար»:

Հիշեցնենք, որ փետրվարի 21-ին ռուսական «Ռոսատոմ» միջուկային էներգիայի պետական կորպորացիայի գործադիր տնօրեն Ալեքսեյ Լիխաչովը հայտարարել էր, որ կորպորացիան Իրանի հետ բանակցություններ է վարում երկրում եւս մեկ ատոմակայանի կառուցման վերաբերյալ:

ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՆ ԹՅՈՒՐՔԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հեյդար Ալիեւի անվան կրթաթոշակային ծրագրի շրջանակներում առաջարկ է արվել օկուպացված Արցախի համալսարանում ստեղծել թյուրքական աշխարհի գիտական կենտրոն: Առաջարկը ներկայացրել է սոցիալական հետազոտությունների կենտրոնի նախագահ եւ Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Զահիդ Օրուջը: Օրուջը առաջարկել է նաեւ մի քանի այլ հավակնոտ ծրագրեր տարածաշրջանի համար, այդ թվում՝ թյուրքական աշխարհին նվիրված բարձրագույն երաժշտական դպրոցի ստեղծումը:

«Արցախի ազատագրման 5-րդ տարեդարձի կապակցությամբ կարող ենք իրականացնել թյուրքական աշխարհի լավագույն գրադարանի նախագիծը, իսկ Ստեփանակերտում կարող են բարձրացվել հին ու ժամանակակից թյուրքական պետությունների դրոշները», - հավելել է նա:

Օրուջն ընդգծել է, որ թյուրքական ազգերի ուղեղային կենտրոնների միջեւ համակարգված գիտական ջանքերը եւ համատեղ հետազոտական նախաձեռնությունները կարող են առանցքային դեր խաղալ գլոբալ մարտահրավերներին դիմակայելու եւ թյուրքական աշխարհի ազդեցության ուժեղացման գործում, հաղորդում են ադրբեջանական լրատվամիջոցները:

ԱՆՀԱՆԳԻՍՏ ԵՆ ԵՐԵՎԱՆԻ՝ ԵՄ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԻՑ

Մոսկվան անհանգստացած է ԵՄ-ին անդամակցելու Երեւանի ձգտմամբ, ասել է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի փոխնախարար Ալեքսանդր Գրուշկոն:

Նրա խոսքով՝ Հայաստանը վտանգում է կորցնել ԵԱՏՄ-ի առավելությունները, եթե Արեւմուտքը նրան ներքաշի իր աշխարհաքաղաքական խաղերի մեջ:

ՏԱՍՍ-ի այն հարցին, թե արդյոք Մոսկվան մտահոգված է ԵՄ-ին միանալու Երեւանի ձգտումներով, Գրուշկոն դրական է պատասխանել:

«Բնականաբար, Հայաստանի՝ ԵՄ-ին անդամակցելու ձգտումները մտահոգիչ են, քանի որ նման ձգտումներն անհամատեղելի են ԵԱՏՄ-ին այս երկրի անդամակցության հետ, եւ մենք այդ մասին խոսում ենք հայ գործընկերների հետ մեր բազմաթիվ շփումներում», - նշել է դիվանագետը: «Հայտնի է, որ ԵԱՏՄ-ին մասնակցության շնորհիվ Հայաստանը դինամիկ զարգանում է, եւ տնտեսական աճ է նկատվում Երեւանի համար բոլոր առանցքային ոլորտներում: Եվ սա հսկայական հարստություն է, որը Հայաստանը կարող է կորցնել, եթե Արեւմուտքը նրան ներքաշի իր աշխարհաքաղաքական խաղերի մեջ՝ փորձելով պոկել Հայաստանը Ռուսաստանից եւ այլ բնական դաշնակիցներից»,- ընդգծել է փոխնախարարը:

ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՎԱՐՔԸ ՉԵՆ ՔՆՆԻ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ» ԴԵՄ ՔՎԵԱՐԿԵՑ

Երեկ ArmLur.am-ը գրել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը փակ նիստում կքննի ՀՀ ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքը: Վերջինս ArmLur.am-ի հետ զրույցում հաստատեց այդ տեղեկությունը եւ հավելեց, որ կմասնակցի նիստին: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը լրագրողների հետ ճեղագրույցում մանրամասնում է, թե ինչ է որոշել ՔՊ խմբակցությունը:

ՔՊ խմբակցությունը դեմ կքվեարկի Անդրանիկ Քոչարյանի վարքի հետ կապված էթիկայի հանձնաժողով ստեղծելու նախագծին: «Բայց ՔՊ խմբակցությունը տեւական ժամանակ աշխատում է ԱԺ-ում մշտական գործող էթիկայի հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ, որտեղ կքննվեն պատգամավորական էթիկայի վերաբերյալ ամենատարբեր հարցերը: Հույս ունենք, որ այդտեղ ընդդիմությունը եւս մեզ հետ կհամագործակցի, որովհետեւ նաեւ ընդդիմության ձայներն են մեզ պետք լինելու, եւ կստեղծվի մշտական գործող էթիկայի հանձնաժողով», - ասել է ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը:

Հիշեցնենք, որ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքը քննելու համար ԱԺ-ում շրջանառության մեջ էր դրվել ընդդիմության նախաձեռնությունը: Խորհրդարանական երկու խմբակցությունները՝ «Հայաստան»-ը եւ «Պատիվ ունեմ»-ը, դիմել էին Ազգային ժողով՝ Անդրանիկ Քոչարյանի վարքի վերաբերյալ վերոնշյալ հանձնաժողովը ստեղծելու: Հիշեցնենք, որ Անդրանիկ Քոչարյանը լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանի հետ զրույցի ժամանակ վիրավորել էր նրան՝ ասելով՝ հեռու կանգնեք ինձանից, մաքրեք ձեր շրթունքները:

ԱԺ աշխատակազմի համապատասխան փորձագետի անունից աշխատակազմը ընդդիմադիր խմբակցություններին տվել էր մասնագիտական եզրակացություն՝ էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ձեւավորելու համար:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ⇨ ՄԱՆԴԱՏԻՑ

Երեւանի ավագանու ՔՊ խմբակցության անդամ Նարեկ Մանուկյանը, իր դիմումի համաձայն, դադարեցրել է ավագանու անդամի իր լիազորությունները: Այս մասին ավագանու նիստում հայտարարեց քաղաքապետ Տիգրան Ավինյանը: Նա հայտնեց, որ համաձայն ԿԸՀ արձանագրության՝ ավագանու մանդատը տրվել է ՔՊ ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Արեւիկ Բլեջյանցին: Երեւանի ավագանու հաջորդ նիստը տեղի կունենա մայիսի 20-ին:

ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Խոզնավարում ՀՀ-ում ԵՄ դիտորդական առաքելությունը նկատել է քաղաքացիական ենթակառուցվածքներին վնաս հասցրած երկու կրակոցների հետեւանքները, որոնք, հնարավոր է, արձակվել են ադրբեջանական բանակի դիրքերից: Այս մասին հայտնել են ՀՀ-ում ԵՄ դիտորդական առաքելությունից:

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ Է

Միջազգային դատական ատյաններում հայցեր ներկայացնելուց հրաժարվելը չի բխում Հայաստանի շահերից: Այս մասին հայտնել է Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնի նախագահ Սիրանուշ Սահակյանը Ադրբեջանի ղեկավարության կողմից իրականացվող հայատյացության քաղաքականությանը նվիրված քննարկմանը: Իրավաբանի խոսքով՝ ՀՀ իշխանությունները, վավերացնելով Հռոմի ստատուտը, ճանաչել են ՄՔԴ իրավասությունը ոչ ամբողջությամբ, այլ միայն երեք տեսակի հանցագործությունների համար՝ ցեղասպանություն, մարդկության դեմ հանցագործություններ եւ պատերազմական հանցագործություններ: Չգիտես ինչու, Ադրբեջանի իշխանությունների կողմից ագրեսիայի հանցագործությունը չի ճանաչվել ՄՔԴ իրավասություն: Սա այն դեպքում, երբ 2021-ից ադրբեջանական զորքերը գտնվում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքում, իսկ 2022-ն նրանք ընդլայնել են օկուպացիան:

ՊՈՒՏԻՆԸ ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ԹԱՂՄԱՆԸ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը չի ծրագրում մասնակցել Հռոմի պապ Ֆրանցիսկոսի հուղարկավորությանը, հայտարարել է մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: «Ոչ, նախագահը նման ծրագրեր չունի»,- ասել է Պեսկովը: Հարցին, թե ովքե՞ր են մեկնելու Ռուսաստանից Վատիկան, ՌԴ նախագահի մամուլի քարտուղարը պատասխանել է, որ որոշումը դեռ կայացված չէ: Նախօրեին Պուտինը ցավակցական հեռագիր էր հղել Հռոմի կաթոլիկ եկեղեցու Կամերլենգոյին՝ Քեւին Ջոզեֆ Ֆարելին: «Բազմիցս հնարավորություն եմ ունեցել շփվելու այս նշանավոր մարդու հետ եւ հավերժ կպահեմ նրա մասին ամենավառ հիշողությունները»,- գրել է նա:

ՏՆՕՐԵՆԸ ՀԵՌԱՑԱՎ

Նուբարաշենի հոգեբուժարանի տնօրեն Սերգեյ Խաչատրյանը սոցիալական ցանցի իր էջում գրել է. «Ահա եվ եկավ օրն ու ժամը՝ թողնելու Նուբարաշենի հոգեբուժական հիվանդանոցի /ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ/ տնօրենի պաշտոնը: Իմ հետ կնքված պայմանագրի ժամկետը լրացավ, եւ այն երկարացնելու առաջարկ չստացա: Անկեղծ ասած՝ երկուսի համար էլ շնորհակալ եմ»:

ՇԻՆԾՈՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՐՑԱԽԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆԻՍՏԸ՝ ԲԱՔՎՈՒՄ

Երեկ Բաքվում շարունակվում էր Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի նկատմամբ հարուցված շինծու գործերով դատական նիստը: Տեղեկացնենք, որ նախորդ նիստը տեղի էր ունեցել ապրիլի 15-ին, որի ընթացքում մի շարք «տուժողներ» էին հարցաքննվել:

Նկատենք, որ ապրիլի 21-ին Բաքվում շարունակվում էր Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների շինծու դատավարությունը: Նիստին ցուցմունքներով է հանդես եկել Արցախի երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանը: Դատական հերթական կեղծ նիստից բացակայել են անկախ լրատվամիջոցները, իրավապաշտպանները եւ օտարերկրյա դեսպանատների ներկայացուցիչները: Արկադի Ղուկասյանն անդրադարձել է Խոջալուում 1992-ի փետրվարին տեղի ունեցած իրադարձություններին՝ նշելով, որ դրանց մասին տեղեկացել է «պաշտոնական աղբյուրներից»:

Հիշեցնենք, որ Արցախի ղեկավարների ու այլ պաշտոնյաների մեղադրում են «ահաբեկչության», «ռազմական հանցագործությունների», «ցեղասպանության» եւ այլ «հանցանքների» համար:

Ընդհանուր առմամբ, դատարանի առաջ կանգնելու է 15 հայ՝ Արցախի նախկին նախագահներ Արայիկ Հարությունյանը, Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ԱԺ նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը, Պաշտպանության բանակի ՋՈՒ շտաբի նախկին պետ Դավիթ Մանուկյանը, ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը,ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, քաղաքացիական անձինք՝ Վասիլի Բեգլարյանը, Էրիկ Ղազարյանը, Դավիթ Ալավերդյանը, Գուրգեն Ստեփանյանը, Լեւոն Բալայանը, Մադաթ Բաբայանը, Գարիկ Մարտիրոսյանը, Մելիքսեթ Փաշայանը:

Օրեր առաջ, CNA-ը (Catholic News Agency) ծավալուն հոդված է հրապարակել Բաքվում ապօրինի պահվող հայ գերիների մասին: Հոդվածի հեղինակ՝ պարբերականի Վաշինգտոնի թղթակից Մադլեն Էլիաբալը թեմայի հետ կապված զրուցել է Ռուբեն Վարդանյանի միջազգային փաստաբան, հայտնի իրավապաշտպան Ջարեդ Գենսերի հետ: Միջազգային հեղինակավոր իրավապաշտպանը կոչ էր արել Թրամփի վարչակազմին կատարել իր նախընտրական խոստումը եւ հայ քրիստոնյաների անունից միջամտել, քանի որ վերջերս բանակցված խաղաղության համաձայնագիրը սպառնում է ռազմագերիներին թողնել անօգնական վիճակում:

«Մեր պահանջը վարչակազմին սկզբից եւեթ շատ հստակ է եղել. հայ քրիստոնյա ռազմագերիների ազատ արձակումը պետք է լինի խաղաղության պայմանագրի առաջխաղացման նախապայման. դա եղել է վարչակազմի դիրքորոշումը»,-իր խոսքում հայտնել էր միջազգային իրավապաշտպան Ջարեդ Գենսերը: Թեեւ այս ամսվա սկզբին Հայաստանն ու Ադրբեջանը հայտարարեցին խաղաղության պայմանագրի տեքստի կետերի համաձայնեցման մասին, սակայն այն չի ստորագրվել, չնայած Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը սոցմեդիայում այն ստորագրելու պատրաստակամություն է հայտնել:

Գենսերը, որը հայտնի է աշխարհի տարբեր մասերում անարդարացիորեն բանտարկված մարդկանց ազատելու իր հաջողված փորձով, ներկայումս աշխատում է ազատել Ռուբեն Վարդանյանին՝ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի էթնիկ հայերի կառավարության նախկին պետնախարարին: Գենսերը նշել է, որ Վարդանյանին՝ Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդին, չի թույլատրվել ունենալ Աստվածաշունչ, ինչը, նրա խոսքերով, «միայն ամրապնդում է այն, որ նրա եւ Լեռնային Ղարաբաղի այլ առաջնորդների հալածանքը բացառապես այն պատճառով չէ, որ նրանք եղել են այսպես կոչված «անկախացող հանրապետության» ներկայացուցիչներ, այլ պայմանավորված է նաեւ նրանց քրիստոնյա լինելու հանգամանքով»: Գենսերը նշել է, որ նախագահ Դոնալդ Թրամփը նախընտրական քարոզարշավի ընթացքում խոստացել էր պաշտպանել հալածանքների ենթարկվող հայ քրիստոնյաներին՝ դատապարտելով Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածը որպես «էթնիկ զտում»: Այժմ, ինչպես ասում է Գենսերը, գերիների ազատ արձակումը «նոր վարչակազմի համար առաջնահերթ խնդիր է»:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԿԵՂԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Հայաստանի բնակչությանը կասկածելի արտադրության ալկոհոլային արտադրանքից զերծ պահելու, դրանց ապօրինի շրջանառության դեպքերը բացահայտելու ու կանխելու, ինչպես նաեւ օրինական դաշտում գործող տնտեսվարողների շահերը պաշտպանելու նպատակով ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչությունը պարբերաբար ձեռնարկում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Այս մասին ArmLur.am-ին հայտնել են ՀՀ ՊԵԿ-ից:

Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում նախկինում գործող ալկոհոլային խմիչքների արտադրական տարածքում իրականացվել է ալկոհոլային խմիչքների քողարկված արտադրություն: Օպերատիվ տեղեկությունը փոխանցվել է Հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչություն: Կեղծ օղիներ արտադրելու եւ իրացնելու փաստերը բացահայտելու նպատակով ձեռնարկվել են համատեղ համալիր լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Հսկիչ գնման արդյունքում ձեռք է բերվել ակցիզային դրոշմանիշերով կամ հսկիչ՝ նույնականացման նշաններով չդրոշմավորված 0.7 լ տարողությամբ 10 շիշ ակնհայտ կեղծ օղի:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում հետազոտվել է նշված տարածքը, որի արդյունքում հայտնաբերվել են օղու արտադրության կազմակերպման համար նախատեսված սարքավորումներ, տարբեր տնտեսվարողների պիտակներով օղու դատարկ շշեր, խցաններ, ինքնաշեն ֆիլտրեր, տարբեր տարաներով սպիրտային հեղուկներ, 1 տոննա տարողությամբ չժանգոտվող պողպատյա տարա, որը լցված է եղել սպիրտանման հեղուկով: Հայտնաբերվել է նաեւ ակցիզային դրոշմանիշերով կամ հսկիչ նույնականացման նշաններով չդրոշմավորված տարբեր անվանումներով 82 շիշ օղի:

«Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն, օղիների արտադրությունը հանդիսանում է ծանուցման ենթակա գործունեություն եւ արտադրողը պարտավոր է օղիների արտադրության համար ներկայացնել ծանուցում՝ վճարելով նաեւ տարեկան պետական տուրք: Պարզվել է, որ նշված հասցեում օղու արտադրությունն իրականացվել է առանց ծանուցման՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափի վնաս: Ձեռքբերված տեղեկություններով կատարվել է պետությանը պատճառված վնասի նախնական հաշվարկ եւ առերեւույթ հանցանքի մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, որտեղ ՀՀ Քրեական Օրենսգրքի համապատասխան հոդվածի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: ՀՀ ՊԵԿ-ը հորդորում է զերծ մնալ կեղծ ալկոհոլային խմիչքների ապօրինի արտադրության եւ իրացման գործունեություն իրականացնելուց:

Հիշեցնենք, որ անհայտ ծագում ունեցող կեղծ ալկոհոլային խմիչքների ձեռքբերումից խուսափելու նպատակով քաղաքացիները կարող են օգտվել հսկիչ նույնականացման նշանների սկանավորման «E-MARK» բջջային հավելվածից՝ այդ կերպ զերծ մնալով վտանգավոր հետեւանքներից:

ԻՐԱՎԻՃԱԿ

7 ՀՈԳԻ ՎԻՐԱՎՈՐՎԵԼ ԵՆ

Ապրիլի 21-ին ավտովթար է տեղի ունեցել Արարատի մարզում:

Արտաշատ քաղաքից դեպի Ոստան գյուղ տանող ճանապարհին բախվել են Արարատի մարզի բնակիչ 29-ամյա Հովհաննես Հ.-ի վարած Nissan Tiida մակնիշի եւ Երեւանի բնակիչ 65-ամյա Դավիդ Դ.-ի վարած Nissan Rogue մակնիշի ավտոմեքենաները: Վթարի հետեւանքով վարորդները եւ 7 ուղեւոր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Արտաշատ» բժշկական կենտրոն: Դեպքի վայր են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արտաշատի հրշեջ-փրկարարական ջոկատից՝ 1 մարտական հաշվարկ: Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները եւ փակել գազի բալոնների փականները: Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկ Տիգրան Վահրադյանը եւ կրտսեր պարեկ Հայկ Հարությունյանը: Վթարի մասին ոստիկանության Արտաշատի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն, որտեղից ժամանել է քննչական խումբը: Վթարի փաստով Արարատի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում են վիրավորների ինքնությունը:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարագրի հիման վրա Տեսչական մարմնի մասնագետները հրդեհատեխնիկական հետազոտություն են իրականացվել ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Լուկաշին, Երեւանյան փողոց, 87 հասցեում՝ «ԼԵՎ 7» ՍՊ ընկերության կողմից շահագործվող բենզալցակայան եւ հեղուկացված ածխաջրածնային գազով լցակայան տեսակի արտադրական վտանգավոր օբյեկտներում: Արդյունքում 2025 թվականի մարտի 27-ին հայտնաբերվել եւ արձանագրվել են հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների մի շարք խախտումներ: Ակնհայտնորեն արձանագրված խախտումներն անմիջական եւ ուղղակի սպառնալիք են հրդեհների առաջացման եւ մարդկանց անվտանգության համար: Ելնելով վերոգրյալից՝ Տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացվել է որոշում ամբողջությամբ դադարեցնել Արմավիրի մարզ, գյուղ Լուկաշին, Երեւանյան փողոց, 87 հասցեում գործող բենզալցակայանի եւ հեղուկացված ածխաջրածնային գազով լցակայանի շահագործումը՝ մինչեւ հայտնաբերված խախտումների վերացումը:

Տեսչական մարմնի Արմավիրի տարածքային ստորաբաժանման եւ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մարզային ստորաբաժանման մասնագետների հետ համագործակցության արդյունքում լցակայանը կապարակնքվել են՝ մինչեւ արձանագրված խախտումների եւ թերությունների ամբողջական վերացումը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 21-ից 22-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 107 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԸՆԴԱՄԵՆԸ 2 ԴՊՐՈՑ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին մեր թղթակիցը տեղեկատվական հարցում է արել, թե «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրով Տավուշի մարզում ո՞ր դպրոցների շենքերն են կառուցվել, հիմնանորոգվել, ո՞ր դպրոցների շենքերն են այժմ կառուցվում»: Մարզպետարանից պատասխանել են, որ այդ ծրագրով կառուցվել, շահագործվում են Գանձաքարի միջնակարգ դպրոցի եւ Կիրանցի մոդուլային միջնակարգ դպրոցի շենքերը: Հավելենք, որ Գանձաքարի դպրոցի շենքը շահագործման հանձնվեց նախատեսված ժամկետից շատ ուշացումով, իսկ Կիրանցի դպրոցն այդպես էլ միջնակարգի կարգավիճակ չստացավ, թեեւ ի սկզբանե այդպես էր նախատեսված: Կիրանցի դպրոցը մնաց որպես հիմնական դպրոց: Մարզպետարանից հայտնել են նաեւ, որ «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրով Տավուշի մարզում Դովեղի մոդուլային միջնակարգ դպրոցի շենքի կառուցումը դադարեցված է, շինարարական կազմակերպության հետ պայմանագիրը՝ խզված, Բագրատաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի եւ Լուսաձորի կրթահամալիրում ընթացքի մեջ է առաջին հարկի կառուցումը, Պտղավանի կրթահամալիրում՝ նկուղային հարկի շինարարությունը, Այրումի միջնակարգ դպրոցի նոր շենքի հիմքերում են աշխատանքներ կատարվել, Սեւ քարի միջնակարգ դպրոցի նոր շենքի համար հողային փոսորակ է սարքվել, շինարարական աշխատանքները դադարեցված են երկրաբանական հետազոտությունների պատճառով, Աղավնավանքի եւ Նորաշենի կրթահամալիրներում հողային փոսորակներ են սարքվել: Նախագծային փուլում է գտնվում Գոշի միջնակարգ դպրոցի նոր շենքը, Նավուրի մոդուլային միջնակարգ դպրոցի շենքը գտնվում է հասարակական լսումների փուլում: Նոր հաստատված դպրոցներից նախագծման փուլում են գտնվում Կոթիի , Արծվաբերդի թիվ 1, Այգեձորի, Նոյեմբերյանի, Կողբի թիվ 1 միջնակարգ դպրոցների եւ Ոսկեվանի կրթահամալիրի շենքերը:

ՉԱԽՈՂԵԼ ԵՆ

2022թ. դեկտեմբերին սուբվենցիոն ծրագրո, 283 միլիոն դրամ դրամ ֆինանսավորմամբ, որի 60 տոկոսը Դիլիջան համայնքի ներդրումն է, սկսվեց Դիլիջանի մշակույթի կենտրոնի հիմնանորոգումը: Նախատեսվում էր նորոգումն ավարտել մոտ մեկ տարում: Անցել է երկուսուկես տարի, հիմնանորոգման աշխատանքները վաղուց դադարեցված են: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին այդ առթիվ մեր թղթակիցը հարցում է արել: Մարզպետարանից պատասխանել են. «Դիլիջանի մշակույթի կենտրոնի շենքի հիմնանորոգման աշխատանքները դադարեցվել են, իսկ պայմանագիրը միակողմանի լուծվել է անբարեխիղճ շինարարական կազմակերպության պատճառով: Համայնքի կողմից հայտարարվել է նոր նախագծի մրցույթ, առկա է հաղթող կազմակերպությունը, նախագծի պատրաստ լինելուց հետո փաթեթը կդրվի սահմանված կարգով մրցույթի: Հաղթող շինարարական կազմակերպության հետ կկնքվի համապատասխան պայմանագիր, որից հետո կշարունակվի շինարարական աշխատանքները: Այս պահին ծրագրի ավարտի վերջնաժամկետի մասին հնարավոր չէ նշել»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԱՊՐԻԼԻ 22-Ը ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Երկրի օրը կազմակերպվում են մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է մարդկանց ուշադրությունը հրավիրել շրջակա միջավայրի եւ երկիր մոլորակի վրա:

Նշենք, որ միջոցառումն առաջին անգամ կազմակերպվել է «Երկրի օր» միջազգային ցանցի կողմից:

Երկրի օրն անցկացնելու երկու օր կա. առաջին օրը գարնանային գիշերահավասարի ժամանակ է՝ մարտի 22-ին, իսկ հաջորդ օրն ապրիլի 22-ն է: Շատ երկրներում այն նշվում է գիշերահավասարի օրը, քանի որ այդ ամենը փոքրիկ ժեստ է գարնան գալստյան մասին:

Հետաքրքիրն այն է, որ ներկայումս շատ մասնակիցներ եւ նախաձեռնող խմբեր Երկրի օրվան նվիրված միջոցառումներ են անցկացնում ամառային արեւադարձի շրջանում, որպեսզի առավելագույնս օգտագործեն տաք եղանակն ու մարդկանց ազատ ժամանակը:

Այս օրն առաջին միջոցառումն անցկացվել է դեռեւս 1970 թվականին ԱՄՆ-ում, այնուհետեւ օրվա հաջորդականությունը ոգեւորել է մարդկանց եւ այդպիսով էլ տոնը կրել է շարունակական բնույթ:

Ամերիկացի հայտնի քաղաքական գործիչ սենատոր Հեյլորդ Նելսոնը Հարվարդի համալսարանի ուսանող Ֆենիս Հայեսի գլխավորությամբ ստեղծել է ուսանողական խումբ, քանի որ այդ ժամանակ կային ուսանողական տարբեր շարժումներ, այն մեծ ուշադրության արժանացավ: Հասարակական ու քաղաքական ակտիվության շնորհիվ ԱՄՆ-ում ընդունվել են շատ օրենքներ ու ակտեր՝ կապված շրջակա բնության պահպանման հետ:

2009 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան գլխավորել է Երկրի միջազգային օրը՝ առաջարկելով այն նշել ապրիլի 22-ին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԻՆՉԵՎ 30 ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄԻ ՉԱՓՈՎ ՎԱՐԿ

«ՎՏԲ-Հայաստան» բանկի ֆիզիկական անձ հաճախորդները կարող են ստանալ մինչեւ 30 մլն ՀՀ դրամի չափով վարկ՝ որպես գրավ ներկայացնելով Հայաստանի տարածքում գտնվող բնակելի տներ, բնակարաններ կամ առեւտրային նշանակության անշարժ գույք: Վարկի առավելագույն գումարը կազմում է գրավադրված գույքի գնահատված արժեքի 60%-ը:

Վարկային պրոդուկտն առաջարկում է ճկուն պայմաններ՝ տարեկան անվանական տոկոսադրույքը տատանվում է 17,5%-ից մինչեւ 21,5% (փաստացի տոկոսադրույք՝ 18,9%- 23,8%), մարման ժամկետը՝ 3-7 տարի: Առաջարկի առանձնահատկությունն է՝ առանց տույժերի վաղաժամկետ մարման հնարավորությունը, ինչպես նաեւ վարկի սպասարկման ամսական վճարի եւ հայտի դիտարկման միջնորդավճարի բացակայությունը: «Անշարժ գույքի գրավադրմամբ վարկը թույլ է տալիս հաճախորդներին ստանալ ավելի մեծ գումար՝ ավելի երկար ժամկետով, քան սովորական սպառողական վարկի դեպքում: Սա ընդլայնում է մեր հաճախորդների ֆինանսական հնարավորությունները եւ օգնում նրանց իրականացնել իրենց ծրագրերը: Ակնկալում ենք, որ մինչեւ 2025թ.-ի վերջ այս պրոդուկտի շրջանակում տրամադրված վարկերի ծավալը կգերազանցի 2 մլրդ ՀՀ դրամը», - նշում է «ՎՏԲ-Հայաստան» բանկի Գլխավոր տնօրենի-Տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Վարկը կարելի է ստանալ «ՎՏԲ-Հայաստան» բանկի ցանկացած մասնաճյուղում: Դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել վարկառուի, համավարկառուի, գրավատուի սոցիալական քարտ, անձնագիր կամ ID քարտ, ինչպես նաեւ գրավի առարկայի սեփականության վկայական:

«ԱԲ ՍԵՐՈՒՆԴ». ԹԻՎՆ ԸՆԴԼԱՅՆՎԵԼ Է

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի հրամանով ընդլայնվել է «ԱԲ սերունդ» դպրոցական փորձարարական ծրագրում ընդգրկված դպրոցների թիվը: Ընդլայնելով աշխարհագրությունը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) համագործակցությամբ իրականացվող փորձարարական կրթական ծրագրում 2025/26 ուսումնական տարվանից ընդգրկված կլինեն ՀՀ մարզերի եւ Երեւանի 26 հանրակրթական ուսումնական հաստատություններ: Արհեստական բանականության ոլորտի գիտնականի կրթական ուղին ստեղծելու նպատակով իրականացվող ծրագիրը նախատեսված է 10-12-րդ դասարանների աշակերտների համար եւ հնարավորություն է ընձեռում սովորել խորացված մաթեմատիկա, ծրագրավորում (Python), արհեստական բանականության հիմունքներ, իրականացնել պրակտիկ նախագծեր արհեստական բանականության ոլորտում: Այս պահին ծրագրում ընդգրկված է շուրջ 600 աշակերտ: Առաջին տարվա հանրահաշվի արդյունքների հիման վրա՝ մեկ տարվա ուսումնառության ընթացքում աշակերտների շուրջ 51%-ն առաջադիմել է թույլ գիտելիքային շեմից մինչեւ միջին եւ բարձր շեմ: «ԱԲ սերունդ» ծրագրով ուսումնառություն ստացող 10-րդ դասարանի աշակերտների հանրահաշվի ավարտական քննության արդյունքի միջին ցուցանիշը 2.2 անգամ բարձր է հանրակրթական ընդհանուր ծրագրով սովորող աշակերտների միջինից (համեմատությունը կատարվել է Տավուշի մարզի դպրոցների հետ): Ծրագրի ազդեցության չափման արդյունքների համաձայն՝ աշակերտների մեծ մասը ոգեւորությամբ է մասնակցում դասերին, եւ «ԱԲ սերունդ» ծրագիրը համահունչ է աշակերտների մեծամասնության մասնագիտական եւ անձնական ձգտումներին:

FASTEX. «ՋԱՏԻԿ» ՖԵՍԹԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿԻՑԸ

Ս.թ. ապրիլի 20-ին «Մոսկվա» կինոթատրոնի մոտ գտնվող Շառլ Ազնավուրի հրապարակում տեղի է ունեցել «Ջատիկ» ֆեսթը: Միջոցառման կազմակերպչական աշխատանքներն ստանձնել էր Fastex-ը:

Ջատկի տոնի առիթով Հայաստանի 50 հայտնի եւ տաղանդավոր նկարիչներ նկարազարդումներ են արել հրապարակում տեղադրված հավկիթների վրա, որոնք վերջում ստացել են տոնական օդապարիկների տեսք:

Արվեստի այս հետաքրքիր նախաձեռնությունն ուղեկցվել է նաեւ սիրված երաժշտական բենդերի կատարումներով: Տոնական տրամադրությունն ապահովել են The Kindergarden, Vanakan, ինչպես նաեւ Miqayel Voskanyan & Friends բենդերը:

Fastex-ը եւ ftNFT-ն միջոցառմանը ներկայացրել են իրենց նորարարական լուծումները, թվային եւ ֆիզիկական արվեստի համադրությամբ ստեղծված ftNFT հարթակը:

Միջոցառման ընթացքում այցելուները հնարավորություն են ունեցել մասնակցել Ջատկի հավկիթներով մրցույթին:

Fastex-ի աջակցությունը «Ջատիկ» ֆեսթին եւս մեկ անգամ ընդգծում է ընկերության պատրաստակամությունը՝ նպաստելու մշակութային եւ համայնքային նախաձեռնությունների անցկացմանը եւ վերահաստատելու իր դերը նորարարական լուծումների զարգացման գործընթացում:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 22 պատահար. 32 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Fastex-Ը ԵՎ Yohealth-Ը՝ ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ

Fastex-ը եւ Yohealth-ը տափօղակով հոկեյի IV դիվիզիոնի աշխարհի առաջնության գլխավոր հովանավորներն են: Հոկեյի IV դիվիզիոնի աշխարհի առաջնությունը 15 տարի դադարից հետո կրկին վերադարձել է Հայաստան: Առաջնության խաղերն անցկացվել են ապրիլի 13-19-ը Գեղասահքի եւ հոկեյի դպրոցի սահադահլիճում: Վադիմ Գուսկովի գլխավորած Հայաստանի հավաքականի կազմում հոկեյի լիգայի ակումբներից ընդգրկվել է 21 մարզիկ:

Ապրիլի 13-ին տեղի է ունեցել միջոցառման բացման արարողությունը, ինչին հաջորդել է դրոշների շքերթը: Առաջնության պաշտոնական թալիսմանի՝ հայկական գամփռի գլխավորությամբ սահադաշտ են դուրս բերվել առաջնության մասնակից երկրների՝ Հայաստանի, Իրանի, Քուվեյթի, Մալայզիայի, Ինդոնեզիայի եւ Ուզբեկստանի դրոշները:

Առաջին տուրում Ուզբեկստանի հավաքականը 13:3 հաշվով առավելության է հասել Քուվեյթի հավաքականի նկատմամբ, իսկ Հայաստանի հավաքականը 24:3 հաշվով հաղթել է Մալայզիային՝ տանելով իր պատմության ամենախոշոր հաշվով հաղթանակը: Հայաստանի հավաքականն իր երկրորդ անընդմեջ հաղթանակն է տարել՝ առավելության հասնելով Ուզբեկստանի ընտրանու նկատմամբ: Հիմնական ժամանակն ավարտվել է ոչ-ոքի՝ 2-2 հաշվով: Հանդիպման ելքը վճռվել է հետխաղյա բուլիտներում, որտեղ Հայաստանի հավաքականը փայլուն հաղթանակ է տարել 2:0 հաշվով: Ապրիլի 16-ին Քուվեյթի հետ կայացած խաղի ավելացված ժամանակում քուվեյթցիները հաղթել են 5:4 հաշվով: Հայաստանի հավաքականը կրել է իր առաջին պարտությունը:

Fastex-ը շարունակելու է խթանել Հայաստանի Հանրապետությունում սպորտի զարգացումը՝ աջակցելով ներպետական ու միջազգային սպորտային իրադարձություններին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես Սոս Ադամյանն եմ: 2019-2023թթ. սովորել եմ Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի՝ Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում բաժնում: Կորցրել եմ ավարտական դիպլոմս: Այն գտնողին խնդրում եմ կապ հաստատել այս հայտարարությունը տարածող խմբագրության հետ:

ՈՐՈՆՎՈՒՄ Է

Ոստիկանության Մասիսի բաժնի կողմից, որպես անհետ կորած, որոնվում է Արարատի մարզի Խաչփար գյուղի բնակիչ 51-ամյա Աշոտ Իվանի Լալայանը:

Նա 2023թ.-ի օգոստոսի 19-ին դուրս է եկել տանից եւ չի վերադարձել:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ԱՆՑԿԱՑՎԵՑ FINTECH360 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

«Յունիբանկի» աջակցությամբ Երեւանում անցկացվեց FINTECH360 միջազգային համաժողովը: Այս տարի Հայաստան ժամանեց ավելի քան 300 մասնակից, այդ թվում՝ բանկերի, վճարային եւ դրամական փոխանցումների համակարգերի ներկայացուցիչներ, խոշոր SS ընկերությունների եւ ստարտափների ղեկավարներ: Նախորդ տարիների համեմատ՝ մասնակիցների թիվն աճել է գրեթե 1,5 անգամ:

Համաժողովին ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյանը, «Յունիբանկի» Խորհրդի նախագահ Գագիկ Զաքարյանը եւ Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանը:

«FINTECH360-ը հիանալի հնարավորություն է առաջատար փորձագետների հետ քննարկելու ոլորտի զարգացման խնդիրները, ինչպես նաեւ ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ համատեղ նախաձեռնություններն ու նախագծերը»,- իր խոսքում նշեց Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյանը:

«Թվային դարաշրջանը բերում է ոչ միայն հնարավորություններ, այլեւ պատասխանատվություն: Մենք կանգնած ենք մի երկխոսության միջեւ՝ տեխնոլոգիաների ու անվտանգության, արագության ու վստահելիության, ստեղծարարության ու կարգավորման: Եվ որքան էլ այդ երկխոսությունը բարդ լինի, այն պետք է կայանա խորությամբ, պատասխանատվությամբ եւ ապագայի տեսլականով: FINTECH360 միջազգային կոնֆերանսը եւ նմանօրինակ ֆորմատով անցկացվող այլ հանդիպումներ վստահաբար կարող են դառնալ այդ երկխոսության կայացման հարթակ՝ միավորելով ոլորտի առաջատարներին ու մասնագետներին»,- նշեց Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանը:

«Յունիբանկի» Խորհրդի նախագահ Գագիկ Զաքարյանը նշեց, որ հատկապես հաճելի է, որ վերջին 3 տարիներին համաժողովն անցկացվում է Երեւանում: Մինչ այդ FINTECH360-ը հյուրընկալել են Հունաստանը, Իսպանիան, Իտալիան, Էստոնիան, Ավստրիան, Մեծ Բրիտանիան եւ այլ երկրներ: Այս տարվա համաժողովն առանձնանում է ներգրավվածության ռեկորդային ցուցանիշով: Ավելի քան 40 խոսնակ երկու օր շարունակ քննարկեցին ֆինտեխի զարգացման ամենաարդիական ուղղությունները: Համաժողովի օրակարգի հիմնական թեմաներն էին՝ AI-հավելվածները ֆինանսական ծառայություններում, բլոկչեյն, կրիպտոարժույթ, DeFi եւ թվային ակտիվներ, միջազգային դրամական փոխանցումների եւ վճարային համակարգերի զարգացում, ինչպես է աճող հիպերանձնավորումը ձեւափոխում հաճախորդների փորձը, FinTech լուծումներ բրոքերային գործունեությունում եւ կապիտալի շուկայում, ապահովագրական շուկայի թվայնացում:

FINTECH360-ին մասնակցում էին փորձագետներ 20 երկրներից՝ Հայաստան, Բելառուս, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Վրաստան, Ղազախստան, Կիպրոս, Ղրղզստան, Լատվիա, Մոլդովա, Մոնղոլիա, ԱՄԷ, Ռուսաստան, Սինգապուր, Տաջիկստան, Ուզբեկստան, Շվեյցարիա, Շվեդիա, Ֆրանսիա եւ Ճապոնիա:

Հագեցված պանելային քննարկումներից հետո FINTECH360-ի մասնակիցներին ներկայացվեց Հայաստանի պատմությունն ու մշակույթը: Հյուրերը նաեւ ծանոթացան հայկական գորգագործության պատմությանն ու գորգերի արարման ընթացքին, մասնակցեցին հայկական տարազներով ֆոտոսեսիային:

ԲԱՆԿԱՅԻՆ Գ

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ՝ CCF-ՈՒՄ

Հետաքրքրվա՞ծ եք CCF-ով, փնտրո՞ւմ եք ամենահետաքրքիր ու խոստումնալից տաղավարն ու գործատուին: Միջոցառման օրերին այցելե՛ք «Կոնվերս» բանկի տաղավար անմոռանալի փորձառություն ստանալու համար:

Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից մեկը՝ «Կոնվերս» բանկը, այս տարի եւս մասնակցելու է CCF-ին նոր հնարավորություններով, ինտերակտիվ շփմամբ ու անակնկալներով:

«Կոնվերս» բանկի տաղավարի այցելուները կստանան համապարփակ տեղեկություններ «Կոնվերս» բանկի նոր մեկնարկող CONVERSION ծրագրի մասին, որն ուսանողների համար ֆինանսական ոլորտում կարիերայի մեկնարկի շատ լավ հնարավորություն է:

Որպես առաջատար ֆինանսական կառույց՝ «Կոնվերս» բանկը շարունակում է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ յուրաքանչյուր մասնագետ կարող է իրականացնել իր պոտենցիալը՝ միաժամանակ ապահովելով բանկի կայուն զարգացումը: Բանկը խրախուսում է նախաձեռնողականությունը, ստեղծում աշխատանքային առաջխաղացման հավասար պայմաններ, խրախուսում, աջակցում կրթությունն ու զարգացումը, այդ թվում՝ նոր աշխատակիցների պարագայում.

CONVERSION-ը ոչ թե հերթական դասընթաց է, այլեւ փորձառություն ապագայի համար: Այն հետաքրքիր է, երիտասարդական, դինամիկ,

Անհետաքրքիր դասերը CONVERSION-ի մասին չեն, Դուք սովորում եք, զարգանում ու շփվում այլ՝ ընկերական միջավայրում՝ մասնակցելով խաղերի, թիմային միջոցառումների վայելելով ողջ ընթացքը,

Մի խոսքով, մասնակիցներին առաջարկվում է ոչ միայն ուսուցում, այլեւ ժամանց, հետաքրքիր նետվորքինգ, պրոֆեսիոնալների հետ շփվելու հնարավորություն:

Career City Fest-ում «Կոնվերս» բանկը եւ «Թունելից 13 կմ հեռավորության վրա» գրքի հեղինակ Ռուբեն Եսայանը կներկայացնեն նաեւ երիտասարդական C360 Nektar փաթեթը: Այն նախատեսված է ակտիվ, նախաձեռնող եւ նպատակասլաց երիտասարդների համար՝ առաջարկելով բանկային համալիր ծառայություններ, արտոնյալ պայմաններով ուսանողական վարկավորման հնարավորություն:

Փաթեթն ակտիվացրածները կկարողանան ամբողջ տարվա ընթացքում մասնակցել «Թունելից 13 կմ հեռավորության վրա» գրքի հետ կապված հետաքրքիր միջոցառումներին. մրցույթներից առաջինը տեղի կունենա հենց փառատոնի ընթացքում:

Մրցույթին կարող են մասնակցել այն հաճախորդները, ովքեր կակտիվացնեն C360 Nektar փաթեթը 01.04.25-ից մինչեւ 26.04.25-ը՝ ժամը 11:00-ն ժամանակահատվածում, կայցելեն «Կոնվերս» բանկի տաղավար, որտեղ սպասվում են հետաքրքիր անակնկալներ, իսկ Գլխավոր մրցանակն է «Թունելից 13 կմ հեռավորության վրա» գրքի հիման վրա նկարահանվող ֆիլմի պրեմիերայի 3 տոմս:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի մայիսի 14-ին գումարվելու է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով:

Մասնակիցների գրանցումը Երեւանի ժամանակով սկսած՝ ժամը 14:00-ից, ժողովի անցկացման սկիզբը՝ ժամը 14:05-ին:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

Team Telecom Armenia

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Երկրի օրվա շրջանակում Team Telecom Armenia-ն մեկնարկեց կայուն զարգացման նախագիծ՝ ներգրավելով նաեւ իր հաճախորդներին: Վերջին մեկ շաբաթվա ընթացքում վաճառված յուրաքանչյուր սմարթֆոնի դիմաց ընկերությունը կտնկի 10 ծառ՝ հիմնելով 1 հեկտար անտառ Լոռու մարզի Քովաձոր համայնքում:

Հիմնադրման օրվանից Team Telecom Armenia-ն ակտիվ քայլեր է իրականացնում շրջակա միջավայրի պահպանման ուղղությամբ, որն ամրագրված է նաեւ ընկերության կայուն զարգացման ռազմավարությունում: Հաշվի առնելով, որ Հայաստանում անտառներն ածխածնի կլանման հիմնական աղբյուրն են, իսկ ընկերությունը պարտավորվել է մինչեւ 2029 թվականը նվազեցնել մթնոլորտային արտանետումները 40%-ով, ուստի այստեղ էական նշանակություն ունի անտառածածկ տարածքների ընդլայնումը:

«Արդեն 3 տարի է, ինչ միանում ենք Երկրի օրվան՝ ցույց տալով մեր հանձնառությունը շրջակա միջավայրի պահպանության գործում: Անչափ ուրախ ենք, որ այս տարվա նախաձեռնությունն իրականացվում է մեր հաճախորդների աջակցությամբ: Անտառների հիմնումը հատկապես կարեւոր է կլիմայապես խոցելի մարզերում, այդ իսկ պատճառով ընտրել ենք Լոռին, որպեսզի վերջինս նաեւ կարողանա դիմակայել աճող բնական աղետներին»,- ասում է Team Telecom Armenia-ի բնապահպանության եւ սոցիալական հարցերով փորձագետ Արեւիկ Մկրտչյանը:

Անտառապատման աշխատանքները կատարվում են ոլորտում բազմամյա փորձ ունեցող «Արմենիա Թրի Փրոջեքթի» (ATP) հետ համագործակցությամբ, որն իրականացնելու է նաեւ անտառի հետագա խնամքն ու սպասարկումը: Տարածքի ամբողջական անտառապատումն իրականացվելու է 2025 թվականի գարնանը եւ աշնանը:

«Անտառների ստեղծման գործում շեշտը դնում ենք անտառների պաշտպանական, անվտանգային, էներգետիկ, սոցիալ-տնտեսական նշանակությունների, ինչպես նաեւ կենսաբազմազանության զարգացման եւ պահպանման վրա: Հաշվի առնելով այս ամենը, ինչպես նաեւ կլիմայի փոփոխության հետեւանքով սպասվող աղետները՝ տարեցտարի ավելացնում ենք անտառապատման ծավալները՝ ընտրելով առավել խոցելի տարածքներ», - նշում է «Արմենիա Թրի Փրոջեքթի» Անտառային բաժնի ղեկավար Վահե Մացակյանը:

Վերջին տարիներին բնապահպանական կառավարման համակարգի ներդրման շնորհիվ Team Telecom Armenia-ն հասել է նշանակալի արդյունքների: Մասնավորապես, 2024 թվականին ընկերության ավտոպարկում էլեկտրական մեքենաների թիվը հասել է 22,8%-ի, ինչը էականորեն նպաստում է ածխածնային հետքի նվազեցմանը: Միաժամանակ, արեւային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման արդյունքում էներգասպառման մեջ վերականգնվող էներգիայի արտադրանքի քանակը կազմում է շուրջ 4,1%, այսպիսով 2022-ի համեմատ աճելով մոտ 20 անգամ:

Բացի այդ, ընկերությունը ակտիվորեն զբաղվում է թափոնների կառավարմամբ. վերամշակվել է ավելի քան 6000 կգ թուղթ եւ ստվարաթուղթ, իսկ E-sim տեխնոլոգիայի գործարկման շնորհիվ հաջողվել է խուսափել 557 կգ պլաստիկ քարտերի, հետեւաբար նաեւ պլաստիկ աղբ ստեղծելուց: Ավելին՝ շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ ձեռնարկվող քայլերի շրջանակներում կրկնօգտագործման են հանձնվում էլեկտրական սարքավորումներ, որոնց ընդհանուր թիվը նախորդ տարի հասել է շուրջ 11,522 հատի:

Երկրի օրն ամենամյա միջոցառում է, որը նշվում է ապրիլի 22-ին՝ շրջակա միջավայրի պահպանությանն աջակցելու նպատակով: Այս տարի այն նշվում է «Մեր ուժը, մեր մոլորակը» խորագրի ներքո:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶՉԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

«Միլանի» նախկին պաշտպան Մարկոս Կաֆուն ասել է, որ կցանկանար տեսնել Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտիին Բրազիլիայի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում: Ավելի վաղ տեղեկություններ էին հայտնվել, որ իտալացի մասնագետը կարող է լքել «սերուցքայիններին» ընթացիկ մրցաշրջանի ավարտին: «Հիանալի կլիներ տեսնել Անչելոտիին Բրազիլիայի հավաքականի ղեկին: Ես նրա հետ աշխատել եմ «Միլանում» հինգ տարի, այնպես որ, ես գիտեմ, թե նա ինչ կարող է բերել ազգային թիմ: Կառլոն հիանալի մարզիչ է, յուրաքանչյուր թիմ ուրախ կլինի տեսնել նրան: Պետք է սպասել ու տեսնել, թե ինչ որոշում կկայացնեն մեր ֆուտբոլային կոնֆեդերացիայի ղեկավարները: Հուսով եմ, որ այս հարցը հնարավորինս արագ կլուծվի»,-Կաֆուի խոսքերն է մեջբերում իսպանական Marca առցանց հրատարակությունը:

ԽՈՍԵԼ Է ԵԶՐԱՓԱԿՉԻՑ

«Մանչեսթեր Սիթիի» գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան խոսել է Անգլիայի Պրեմիեր լիգայի 34-րդ տուրի՝ «Ասթոն Վիլայի» հետ առաջիկա հանդիպման մասին: «Այս խաղը կարո՞ղ է որոշիչ դեր խաղալ վերջնական տեղի որոշման հարցում, անկասկած: Սա եզրափակիչ է, եւ մեր երկրպագուները կարող են օգնել մեզ հաջորդ մրցաշրջանում կրկին խաղալ Չեմպիոնների լիգայում: Առաջին րոպեից մեզ անհրաժեշտ է նրանց աջակցությունը եւ անընդհատ աղմուկ ստեղծելը: Այս հանդիպումը կկայանա ընդամենը երեք օր այն բանից հետո, երբ վերջնամասում երկու գոլերը մեզ դժվարին հաղթանակ բերեցին «Էվերթոնի» նկատմամբ»,- Գվարդիոլայի խոսքերն է մեջբերում ակումբի պաշտոնական կայքը:

«Սիթին» 58 միավորով Պրեմիեր լիգայի 5-րդ տեղում է: «Ասթոն Վիլան» 57 միավորով յոթերորդ տեղում է:

18–ՐԴ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

«Տոտենհեմը» Անգլիայի Պրեմիեր լիգայի 2024/2025 մրցաշրջանի 33-րդ տուրում պարտվեց «Նոթինգհեմին» (1:2): Այսպիսով, Անգելոս Պոստեկոգլուի թիմն այս մրցաշրջանում կրեց 18-րդ պարտությունը: Վերջին անգամ «Սփըրզը» այսքան խաղ պարտվել է 2003/2004 մրցաշրջանում: Այդ ժամանակ նրանք առաջնությունն ավարտել են 19 պարտությամբ: Հինգերորդ րոպեին հաշիվը բացել է «Նոթինգհեմի» կիսապաշտպան Էլիոտ Անդերսոնը: 16-րդ րոպեին հյուրերի առավելությունը մեծացրել է հարձակվող Քրիս Վուդը: 87-րդ րոպեին գոլի հեղինակ է դարձել «Տոտենհեմի» հարձակվող Ռիչարլիսոնը:

Անցկացրած 33 խաղից հետո «Տոտենհեմը» Պրեմիեր լիգայի մրցաշարային աղյուսակի 16-րդ տեղում է՝ վաստակելով 37 միավոր: Սփըրսն առջեւում խաղեր ունի «Լիվերպուլի», «Վեսթ Հեմի», «Քրիսթալ Փելասի», «Աստոն Վիլայի» եւ «Բրայթոնի» դեմ:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԱՈՒՍԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

ԳԱՈՒՍ թատերախումբը դարձել է Բրյանցեւի անվան միջազգային 26-րդ փառատոնի գլխավոր մրցանակակիր: Փառատոնին, որն անցկացվել է ապրիլի 14-17-ը Սանկտ Պետերբուրգի Պատանի հանդիսատեսի թատրոնում, Հայաստանի թատերախումբն արժանացել է Գրան պրիի: Երրորդ տեղը զբաղեցրել է Սեւաստոպոլի թատերախումբը, երկրորդ հորիզոնականը՝ Մոսկվայի, իսկ առաջին տեղը՝ Բելառուսի թատերախումբը: ԳԱՈՒՍ-ի ներկայացուցիչները խոստովանել են, որ հաղթանակն անակնկալ է եղել, հուզվել են եւ խոստացել կրկին մասնակցել փառատոնին: Չորս օր շարունակ մասնակիցները հանդիսատեսին են ներկայացրել թե՛ դասական, թե՛ ժամանակակից դրամատուրգների ստեղծագործությունների նոր ու հետաքրքիր, համարձակ մեկնաբանություններ՝ մեծ բավականություն պատճառելով թատերասերներին: Փառատոնին մասնակցել է տասներկու թատերախումբ Բելառուսից, Հայաստանից, Ղազախստանից, Աբխազիայից, Ռուսաստանից եւ Թունիսից: Խաղացել են դրամատիկ, պլաստիկ, երաժշտական եւ տիկնիկային ներկայացումներ:

ՋՈՒՐԱԲ ԾԵՐԵԹԵԼԻ. ՀԱՎԵՐԺ ՀԻՇԱՏԱԿ

92 տարեկան հասակում մահացել է ժամանակակից ամենահայտնի քանդակագործներից մեկը՝ Ջուրաբ Ծերեթելին: Ջուրաբ Ծերեթելին նկարիչ էր, հուշարձանագետ եւ քանդակագործ, ուսուցիչ եւ հասարակական գործիչ, ԽՍՀՄ, Վրաստանի եւ Ռուսաստանի Դաշնության ժողովրդական նկարիչ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի նախագահ: Նա ղեկավարել է ամենամեծ գեղարվեստական նախագծերը: 1970-ական եւ 1980-ական թվականներին եղել է ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարության գլխավոր նկարիչը, 1980 թվականին՝ Մոսկվայի Օլիմպիական խաղերի գլխավոր նկարիչը, 1995 թվականին՝ Պոկլոննայա Գորայի հուշահամալիրի կառուցման գեղարվեստական ղեկավարը, 1995 թվականին՝ Մոսկվայի Քրիստոս Փրկչի տաճարի ներքին հարդարանքի վերակառուցման գլխավոր նկարիչը:

Ծերեթելիի աշխատանքները ցուցադրվում են Ռուսաստանի, ԱՊՀ երկրների, ինչպես նաեւ բազմաթիվ արտասահմանյան երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում:

ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԿԱՅԱՆԱ ԱՊՐԻԼԻ 26–ԻՆ

Հռոմի պապ Ֆրանցիսկոսի հուղարկավորությունը տեղի կունենա շաբաթ օրը՝ ապրիլի 26-ին, հաղորդում է ՏԱՍՍ-ը՝ հղում անելով Վատիկանին: Նշվում է, որ Հռոմի պապի հուղարկավորության արարողությունը տեղի է ունենում նրա մահից հետո չորրորդից վեցերորդ օրվա միջեւ ընկած ժամանակահատվածում: Իտալական լրատվամիջոցները ընդգծում են, որ կոնկլավը, որի ժամանակ կընտրվի նոր Հռոմի պապը, պետք է սկսվի մայիսի 6-ից 10-ը:

Միաժամանակ, կոնկլավին կարող է թույլատրվել սկսել ավելի վաղ, եթե բոլոր կարդինալները, ովքեր իրավունք ունեն մասնակցելու Հռոմի պապի ընտրությանը, կարողանան ավելի վաղ ժամանել Վատիկան:

● *«Բոհեմ» թատրոնում ապրիլի 26-ին տեղի կունենա «Շեղջե լա ֆամ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000, 2500, 3000, 4000, 4500, 5000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ արդյոք պետք է անշարժ գույքի պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմումները ներկայացվեն այն սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ, որի սպասարկման տարածքում գտնվում է դիմումի առարկա անշարժ գույքը:

Մետաքսյա Արիստակեսյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման դիմումները կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ցանկացած սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: Նույնը վերաբերում է նաեւ ներկայացված դիմումի հիման վրա կազմված փաստաթղթերի ստացմանը, որոնք կրկին կարելի է ստանալ ինչպես դիմումը ընդունած, այնպես էլ ցանկացած այլ սպասարկման գրասենյակից կամ օպերատորի մասնաճյուղից:

ՀՀ Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմողներին տրամադրվող ստացականում նշվում է դիմումի մուտքագրման համարը, որը միաժամանակ հանդիսանում է նաեւ ծածկագիր, որի օգնությամբ դիմողը հնարավորություն կունենա ՀՀ կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջի միջոցով հետեւել իր դիմումի քննարկման ընթացքին:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե որոնք են որդեգրելու պայմանները եւ որ մարմիններն են տալիս որդեգրման մասին եզրակացություն:

Լիդա Հարությունյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ որդեգրումը կատարվում է որդեգրել ցանկացող այն չափահաս անձանց դիմումի համաձայն, ովքեր հաշվառված են որպես որդեգրողի թեկնածուներ: Եթե միեւնույն երեխային որդեգրելու ցանկություն ունեն ամուսինները, ապա երկուսն էլ պետք է հաշվառվեն որպես որդեգրողի թեկնածուներ: Անձը, որպես որդեգրողի թեկնածու, հաշվառվում է ՀՀ մարզպետարանների, իսկ Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի կողմից տրված որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացության հիման վրա:

Որդեգրման հնարավորության մասին եզրակացություն են տալիս եւ որդեգրել ցանկացող անձանց հաշվառումն իրականացնում են ՀՀ մարզպետարանները /Երեւանի քաղաքապետարանը/, օտարերկրացիների դեպքում՝ որդեգրման հարցերով կենտրոնական մարմինը, իսկ կենտրոնացված հաշվառումը իրականացնում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառվում են այն երեխաները, որոնց որդեգրման համար առաջացել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքեր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ պաշտոնական լրահոսից

Ծնվել է 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված Գրիշա Դանիելյանի եղբայրը՝ Ռոբերտը: Մայրը պատմում է, որ երկար ժամանակ կասկածում էր՝ արդյոք պե՞տք է նորից երեխա ունենալ: Հարցի պատասխանը եկավ երազի տեսքով. Գրիշան երազում հայտնվեց՝ մորը ասելով, որ հայրը շատ է տխրում, ժամանակն է, որ նորից ծնող դառնան:

Ապրիլի 19-ին լույս աշխարհ եկավ Ռոբերտը՝ 3200 գրամ քաշով եւ 51 սմ հասակով, հայտնում են «Շենգավիթ» ԲԿ-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 3 + 5 + 12+ 15
	Կոտայքի լեռներ	+ 2 + 4 + 11+ 14
	Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 +16 + 18
	Գեղարքունիք	+ 2 + 4 + 11+ 14
	Լոռի	- 3 + 2 +15 + 18
	Տավուշ	+ 1 + 5 +18 + 22
	Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 +14 + 18
	Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 4 +15 + 18

	Արարատ	+ 3 + 5 + 17+ 20
	Արմավիր	+ 3 + 5 + 20+ 22
	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 4 + 12+ 15
	Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 5 + 19+ 20
	Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 + 20+ 23
	Սյունիքի նախալեռներ	+ 1 + 3 +15 + 18
	ԼՂՀ	+ 3 + 5 +12 + 17
	Երեւան	+ 4 + 6 +16 + 19

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.4.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*